

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱՐԱՆԻ ԵՐԱՐԱՆԻ ՏԱՐԻ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԽԻՎ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлиси, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253:

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզումով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկով.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253:

ԲՈՂԱՆԴԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Բարձրագոյն Ուկրաին. — Ներքին Տեսչութիւն. Գիւղական հարցը. Դարձեալ մի նոր պիէս. Նամակ Կիւյովոյից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Պարտեզում շուրջը. — ՀԵՌԱՅԻՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. — ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ Պարտեզում:

ԲԱՐՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒԿԱՅ

(Ուկրաին գործակալութեան հետախուզում)

13 զինվորներ: Պարտեզում կան Բարձրագոյն Ուկրաին Կառավարիչ Սենատին պետական կարգը կատարող գործընկերները նախատեսված կան միջոցներ մասին:

Մեր Թագաւոր Նախնիքների սրբազան աւանդների համաձայն, աղագար մտածելով Աստուծոյ Մեզ յանձնված Պետութեան բարօրութեան մասին, Մենք, անհրաժեշտաբար անխախտ պահելով կայսրութեան հիմնական օրէնքները, համարում ենք կառավարութեան գործը երկրի կարիքների մասին արթնօրէն հոգալը, զանազանիւ ռուս ժողովրդի շահերին իսկապէս համապատասխանող միջոցները՝ յաճախ սխալ և օտար հանգամանքներից ներշնչված ձգտումներից: Իսկ երբ այս կամ այն փոփոխութեան կարիքը հաստատւում է, այն ժամանակ նրա ի կատար ածելուն Մենք անհրաժեշտ ենք համարում ձեռնարկել, եթէ այդ փոփոխութիւնը նոյն իսկ պահանջը օրէնսդրութեան մէջ էական նորմալութիւններ անելու: Չենք կասկածում, որ այդպիսի ձեռնարկութիւնների իրականացմանը Մեր հպատակները խոհական մասը կը դիմաւորէ համակրանքով, այն մասը, որը պայքարի իսկական բարձրագոյնը տեսնում է պետութեան հանգստութեան և ժողովրդական անհրաժեշտ կարիքներին բաւարարութիւն տալու մէջ: Մեր հոգաւորից ամենազգացաւորը համարելով Մեզանում ամենաբարձրագոյն գիւղացիական դասի վիճակի ամենաբարձր կարգի մասին, Մենք տեսնում ենք, որ Մեր կան-

խու արած ցոյցու փնտրի համա ձայն, այդ գործն արդէն ենթարկվում է քննութեան և ուսումնասիրվում են գիւղացիական կենցաղի կազմութեան կարևորագոյն հարցերը այն տեղեկութիւնների և կարծիքների հիման վրա, որ յայտնել են քննութեան ժամանակ գիւղատնտեսական արդիւնաբերութեան ընդհանուր կարիքներին համար հրաւիրված տեղական կոմիտեաները: Մենք հրամայում ենք, որ այդ աշխատանքները գիւղացիական օրէնքները կայսրութեան ընդհանուր օրէնքների հետ միաւորեն, դիւրացնելով Ազատարար Թագաւորի այդ դասակարգի համար իր հաւատարմութեամբ տեղի տալով Մեր հայրենիքում պետական և հասարակական կենսի համար իրաւաստի լինող ազատիւնը համար, անյետաձգելի ենք համարում:

I. Իսկական միջոցներ ձեռք առնել օրէնքի լիակատար ուժը պաշտպանելու համար, որը կազմում է Ինքնակալ Պետութեան մէջ Գահին ամենակարևոր նիւթը, որպէս զի նրա անխախտ և ամենքի համար իրաւաստի կ'ընդունուի համար, անյետաձգելի ենք համարում:

II. Զեւաստների և քաղաքների հիմնարկութիւններին հնար եղածին չափ լայն մասնակցութիւն տալ տեղական բարօրութեան զանազան մասերը վարելու գործում, շնորհիւ նրանց դրա համար անհրաժեշտ ինքնուրոյնութիւնը՝ օրինական սահմաններում, և այդ հիմնարկութիւններում գործունէութեան հրաւիրել հաւատարմ հիմունքներով՝ տեղական գործերում շահա-

գրգռված ազգայնականութեան բոլոր մասերի ներկայացուցիչներին: Իսկ կարիքներին աջակցելով բաւարարութիւն տալու համար կազմել, բացի այժմ գոյութիւն ունեցող նահանգական և գաւառական զեմստովոների հիմնարկութիւններից, նրանց հետ սերտ կապակցութեան մէջ, հասարակական հիմնարկութիւններ փոքր տարածութեան հողամասեր պարունակող տեղերի բարօրութեան գործերը վարելու:

III. Դատարանի առաջ բոլոր դատակարգների անձերի հաւասարութիւնը պաշտպանելու նպատակով՝ պետութեան դատարանական մասում մտցնել կազմակերպութեան անհրաժեշտ միութիւնը և բոլոր աստիճանի դատական հիմնարկութիւններին ապահովել անհրաժեշտ ինքնուրոյնութիւնը:

IV. Զարգացնել Մեր արդէն ձեռք առած միջոցները ազանդելու բանտների դրութիւնը գործարաններում, զաւթներում և հանքերում և հոգ տանել բանտների պետական ապահովագրութեան մասին:

V. Վերաբնիկ հասարակական կարգի թշնամիների ոճրագործ գործունէութեան անօրինակ արտայայտութեան ժամանակ հրատարակված արտակարգ օրէնքները, որոնց գործադրութիւնը կապված է ազնիւստեղծութիւն իշխանութեան բարեհայեցողութեան խիստ ընդարձակման հետ և հոգ տանել ինչպէս նրանց տարածման շրջանը սահմանափակելու վրա, նոյնպէս և թոյլատրել նրանցով սահմանափակելու մասնաւոր անհրաժեշտ իրաւունքները միայն այն դեպքերում, երբ իսկապէս սպառնում են պետութեան ապահովութեանը:

VI. 1903 թւի փետրվարի 26-ի Մանիֆեստում Մեր արտայայտած անխախտ ուստատիւնը ցանկութիւնը՝ պահպանել կայսրութեան հիմնական օրէնքներով սրբագործված համբերատարութիւնը հաւատի գործերում՝ այդ զգացմունքը ամրապնդելու համար՝ վերաբնութեան ենթարկել ազանդաւորների, նոյնպէս և այլացի և այլաւորոն անձեր իրաւունքների մասին եղած օ-

րէնքները և, դրանից անկախ, այժմ և եթէ ազանդաւորատար կարգով ձեռք առնել համապատասխան միջոցներ հետաքննելու նրանց կրօնական աշխարհից այն բոլոր ձեւումները, որ օրէնքում պարզապէս չեն զգացվում:

VII. վերաբնիկ աշխարհների և կայսրութեան առանձին մասերի ընդհանրի վերաբերութեամբ գոյութիւն ունեցող սահմանափակող որոշումները, այն պայմանով, որ այդ որոշումները յայտնուեն պահպանվելու միայն նրանք, որոնք առաջացել են պետութեան հասարակական շահերից և ուսու ժողովրդի անկեղծ օգտից, և

VIII. Վերաբնիկ մասերի վերաբերեալ այժմ գործող որոշումներից աւելորդ ճնշումները և մասնաւոր խառը դեպք օրէնքով ճիշդ որոշված սահմանների մէջ, տալով զբաղմունքներին մասնաւոր համապատասխան լուսաւորութեան առաջադիմութիւններին և այդ պատճառով նրան պատկանող նշանակութեան, հնարաւորութիւն արժանապէս կատարելու յօգուտ Ռուսաստանի իւրացի ձգտումների արդարացի արտայայտիչ լինելու բարձր կուշումը:

Նախացուցանելով այդ հիմունքները վրա մի շարք խոշոր ներքին վերանորոգութիւնները մերձակալ ապագայում, որոնց մի մասը, Մեր առաջնուց տուած ցուցմունքների համաձայն, արդէն նախական քննութեան է ենթարկվում, Մենք դրա հետ միասին այդ վերանորոգութիւնների զանազանիւ պարզութեան և լրջութեան համաձայն բարեւոյ ենք համարում սահմանել հէնց կարգը նրանց ամենաբարձր և լիակատար իրաւորման եղանակները ընկնելու համար: Մեր պետական հիմնարկութիւնների շարքում վարչութեան առանձին մասերի աւելի սերտ միացման ինչպէս զարգացումը է Միջխորհրդի Կոմիտէին, այդ պատճառով հրամայում ենք Միջխորհրդի Կոմիտէին վերաբերած իւրաքանչիւր առարկայի վերաբերմամբ քննութեան առնել Մեր դիտաւորութիւնները կենսի մէջ մտցնելու լաւագոյն եղանակի հարցը և ներկայացնել Մեզ ամենա-

ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԿԱՅ

ՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԿԱՍՏԱՆՈՒՄ

(Նամակ Թաւրիցի)

1900 աղող թւականին յաջորդեցին իւրար չորս անաղող տարիներ Պարսկաստանի վաճառականութեան համար, որոնք և պատճառ դարձան մի շարք յայտնի առևտրական տնտեսական տնտեսութեան:

1901 թւականից սկսած սնանկանում են մի շարք առևտրական ընկերութիւններ. — «Արաքս», «Անահ», «Բրան», «Թրան», «Երզն», «Միջալէրաններ», «Երզն», «Երզն» Գրիգորեանները, և այլն: Եւ նոյն թւականի նոյնիմանի 12-ին սնանկացաւ «Արամեան» յայտնի առևտրական ընկերութիւնը, որ 15 տարուց ի վեր գործում էր և չէր նայած վերջին երեք տարիների ծանր հարուածներին, կարողացել էր մի կերպ իր գոյութիւնը պահպանել:

Վերոյիշեալ ընկերութիւնը վարում էր ընդարձակ առևտուր Պարսկաստանի և Ռուսաստանի շատ վաճառաշահ քաղաքներում, և վերջին տարիներին էլ մեծ քանակութեամբ բոժոժ էր արտահանում ծրանաւ: «Արամեան» ընկերութիւնը Պարսկաստանում հայ վաճառականների մէջ, թէ իր գործերի ընդարձակութեամբ, թէ զբաղվելով և թէ իր դիրքով համարվում էր երկրորդը (առաջինը համարվում են «Երզն», «Թրան»):

Բայց թէ որքան են վերջինիս ընկերութիւնների սնանկութեան պատճառները: Մեզ համար պարզ կը լինի այդ բանը այն ժամանակ, երբ մենք յիշելու լինենք Հնդկաստանի հայ վաճառականների վիճակը, նախ քան անդլիացիների մուտքը Հնդկաստան և յետոյ:

Ինչպէս յայտնի է, անգլիացիների մուտքը մի պատճառ դարձաւ այնտեղի հայ միլիոնատէրների համար և նրանց փառաւոր անցեալին յաջորդեց մի ծանր և տրուր ապագայ: Այն հայ հարուստ վաճառականները, որոնք մի ժամանակ իրանց միլիոններով Հայաստանին էին կամենում առնել, ոչնչացան իրար բռնից և նոյն իսկ ստիպված եղան ծառայել նորանաւուտ և խելացի վաճառականների ձեռքի տակ:

Պատճառները շատ պարզ են: Հայ տգէտ վաճառականը չէր կարող մրցել անգլիացի խելոք, հեռատես առևտրականների հետ:

Այն և նոյն պատճառն էր քաղաքի ենթակալից Պարսկաստանի հայ վաճառականութիւնը: Այն առևտրական տնտեսը, որովք նախ քան օտարների մուտքը, շնորհիւ իրանց քիչ շատ ստոր շրջապատին և բախտի բերմունքին, երկար տարիների ընթացքում քրտնալան աշխատանքով կարողացել էին հաղթանք դիզել, մի քանի տարվա ընթացքում ոչնչացան բոլորը, երբ որ սապարէզ եկան օտար, խելացի առևտրականները:

Օտար առևտրականները հայ վաճառականների շնորհիւ ծանօթանալով երկրի շուկաներին, կամայ-կամայ ներս մտան և իրանց ձեռքն առան երկրի առևտրի նշանաւոր մասերը, ինչպէս, օրինակ, արծաթի առևտուրը տէրութեան հետ, գորգերի արտահանութիւնը, փոխադրութիւնները և վերջինս էլ մրցեցին արտահանութիւնը:

Նախ քան դրանց մուտքը այդ բոլորը կատարվում էր հայ վաճառականների ձեռքով, որոնցից անագին օգուտներ էին ստանում: Ինչպէս լուր և ենք, հէնց մի տարի «Արամեան» ընկերութիւնը արծաթի մէջ մօտաւորապէս 100,000 ռուբլի օգուտ էր ունեցել: Հէնց այդ արծաթի շնորհիւ էր, որ «Երզն», «Թրան» և «Երզն» կարողացել են հարստութիւն դիզել:

Իսկ երբ օտար բանկերը և վաճառականները ներս մտան Պարսկաստան, շնորհիւ իրանց հեռատես և խելացի տակտիկայի ու գործունէութեան, իրանց ձեռքն առան այդ բոլորը և հայ վաճառականը, չէր կարողանալ մրցել նրանց հետ, դուրս ըլլից սապարիցից, միայն իր ձեռքում պահելով չոր մրցեցին առևտուրը, որի վրա երբեք չէր սրբան ուշք չէ դարձնում, որովհետեւ դրա օգուտն ինքն ըստ ինքեան մի շնորհիւ էր: Այն այդ բոլոր պատճառներին շնորհիւ է, որ մենք ակնառատ ենք մի շարք տարուր երկրորդների: Պարսկահայ վաճառականին բաժին ընկաւ Հնդկաստանի վաճառականի վիճակը: Այժմ սրանց էլ միայն փնտրում է նրանց նման ծառայել կամ լինել մի հասարակ միջոցով:

Բայց սրանով չեն վերջանում մի շարք սնանկութիւնների պատճառները: Հայ վաճառականը անհեռատես է և անհաշիւ, բառիս բուն նշանակութեամբ: Նա առանց երկար ու բարակ մտածելու, բախտին է յանձնում իր ամբողջ ունեցածը, դնելով Պարսկաստանի չոր մրցեցին, առանց իմանալու օտար շուկաների գները և նրանց սպառնացող վտանգները: Շնորհիւ իրանց ոչխարային միամտութեան, անհեռատեսութեան և անհաշիւ լինելուն, որոնք անագին քանակութեամբ ապրանքներ են բաց թողնում հրէյս անձանցի գնորդներին, սրանք օգտվելով նրանց միամտութիւնից, առանց կոպէկ անգամ վճարելու, թողնում, փախչում են, տանելով նաեւ իրանց հետ ապրանքները: Ինչպէս տեղեկանում ենք, միայն 1902 թւականին Առաքելաւորում մի հրէյս վաճառական Թաւրիզի հայ վաճառականներից վերցնում, փախչում է մօտաւորապէս 50,000 ռուբլու ապրանք:

Շրջան յապաղա աշխատանքի փախչում, սակայն խաբուսիկ յոյսերով, չը բաւականաւոր իր դրամազրկում, հազարն պարտքերի տակ

է ընկնում նա և ճնշվում տոկոսների ծանրութեան տակ: Այսպէս ուրեմն, մի կողմից իր ձեռքում պահած մրցեցին զինաները, տոկոսների ծանրութիւնը, մի կողմից նրա անհեռատեսութիւնը և չորրորդ կողմից էլ արծաթի և ուրիշ վերին աստիճանի շահաւէտ նիւթերի ձեռքից բաց թողնելը, ստիպեցին նրանց վերջին փնտ քարեն ասելու իրանց փառաւոր անցեալին: Այս սնանկութիւնների պակաս չը նպաստեցին խելացի և ուսու-կապովական պատեւաբար, որովհետեւ խելացի պատճառով հայ վաճառականը չը կարողացաւ կանոնաւոր առևտուր անել, իսկ ուսու-կապովական պատեւաբար էլ Ռուսաստանի շուկաներում զցցեց ապրանքների արժէքները: Օրինակ, հէնց այս տարի մենակ բարձրակարգ գորգին 4 ռուբլի փաս է անում: Այդպիսի ծանր փասները երբեք չէ կարող ծածկել պուշին մի քանի կօպէկ օգուտ անող չոր մրցեցին:

«Արամեան» ընկերութեան ներկայ սնանկութիւնը, որը առիթ տուեց մեզ գրելու այս յօդուածը, հանում է մօտաւորապէս 400,000 ռուբլու: Այս գումարը մէջ մտնում է Թաւրիզի ուսումնարանների և ազգային ուրիշ հաստատութիւնների գումարներ, որոնք տարիների ընթացքում, կօպէկ-կօպէկ ողորմութեամբ հաւաքվել են ժողովրդից: Անշուշտ «Արամեան» ընկերութիւնը ի նկատի կունենայ այդ ազգային գումարների սրբութիւնը և չի վարվի այնպէս, ինչպէս մի քանի տարի առաջ վարվեց «Անահ» ընկերութիւնը, որը մինչև այժմ էլ իւրացրել է ազգային փողերից մի մեծ գումար: Անկասկած թաւրիզի այդ հաստատութիւնների վարչներն էլ կաշխատեն լրիւ ձեռք բերել այդ գումարները, մանաւանդ որ գործերը յանձնված են պարսից տէրութեան Ֆինանսների մինիստր Մուշիր-է-Դովլան:

Դաւալի

կարճ միջոցում իր եզրակացութիւնները ապագայում սահմանված կարգով ուղղութիւն տալու ենթակայ ձեռնարկութիւններին: Վերջոյնիսլ գործերի մշակութեան ընթացքի մասին համարեալ գեղեցիկներու է Մեզ: Թող հառաւորի Սենատն անէ հարկաւոր կարգադրութիւնը այս հրամանը գործադրելու համար:

Իսկական լրատու Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է. «ՆիկիՅԱՅ» ծարսված Մէլում, 1904 թւի դեկտեմբերի 12 ին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ռուսաստանում գիւղացին առանձին դասակարգ է կազմում: Նրան չեն տուած այն դատաստանական, վարչական հիմնարկութիւնները, այն իրական կարգերը, որոնցից օգտվում են սզգաւնական ոչ գիւղական տարրերը: Գիւղացին առանձին պարտաւորութիւններ ունի, առանձին կարգերի ու կանոնների է ենթարկված: Այդ գրութիւնը վաղուց էր պահանջում լուրջ ուղղորդութիւն: Մի երկիր չէ կարող առաջադիմել, գտնել բարեկարգութեան իսկական ճանապարհը, երբ նրա ազգաբնակչութեան հազարն մեծամասնութիւնը զրկված է իրական լայն արտօնութիւններից, երբ նա համարվում է մի ուրիշ տեսակ դասակարգ, որի համար պիտի սահմանված լինի բոլորովին առանձին մի դրութիւն:

Այս իրողութեան վրա ուղղորդութիւն էին հրաւիրում այն գիւղատնտեսական խորհրդակցութիւնները, որոնք մի քանի տարի առաջ կառավարութեան կողմից հրաւիրված էին բացատրելու թէ ինչ միջոցներով կարելի է բարեկարգել իրենի տնտեսական գրութիւնը: Պարբերական թիւները տեղի ունեցան Ռուսաստանի 49 նահանգներում և նրանց մասնակցող գետակ անձանց թիւը հասնում էր 21 հազարի: Տեղական այդ մասնագործների մանրամասն գեղեցիկները այժմ հաւաքված են Փետերբուրգում մի յատուկ հիմնարկութեան մէջ, որ պիտի ընէ գիտակ մարդկանց կարծիքներն ու ցուցմունքները և իր եզրակացութիւնները մշակէ: Այդ հիմնարկութեան նախագահն է ֆինանսների նախկին մինիստր և մինիստրների կոմիտեի այժմեան նախագահ Ս. Իւ. Վիտտէ:

Այս քանի օրերը ֆինանսների մինիստրութեան պաշտօնական օրգանի մէջ տղվեց պ. Վիտտէի կազմած գեղեցիկը, որ վերաբերվում է գիւղացիների իրական գրութեան: Զեկուցումը մօտենում է կարելու, առաջնակարգ հարցին ցանկալի ուղղութիւնը: Գիւղական ազգաբնակչութեան դասակարգային առանձնացումը նշանաւոր չափով խախտվում է: Գիւղական աշխարհի մէջ մտցվում է ինքնավարութեան սկզբունք, տեղային սովորութիւնները վրա հիմնված գիւղական դատարանը համարեալ միանգամայն վերացվում է և նրա տեղ առաջարկվում է հաստատել անկախ դատաստանական հիմնարկութիւններ, հիմնված նոյն օրէնքների վրա, որոնք գոյութիւն ունեն պետութեան մէջ, ոչ գիւղացի ազգաբնակչութեան համար: Նշանաւոր բարեփոխումները առաջարկված են ոստիկանական կարգակերպութեան վերաբերմամբ:

Մենք մի ուրիշ անգամ աւելի մանրամասն տեղեկութիւններ կը տանք այս ծրագրի մասին: Ան այժմ այսքանը կասեմք, որ եթէ պ. Վիտտէի այդ առաջարկութիւնները օրէնքի ձև ստանան, մեր գիւղական ազգաբնակչութեան համար կը բացվի քաղաքացիական իրաւունքների մի նոր շրջան: Զիչ է, այդ ծրագրի մէջ դարձեալ մնացել են դասակարգային առանձնացման շատ նշաններ, բայց առաջարկվող բարեկարգութիւններն էլ այնքան աչքի ընկնող, այնքան խոշոր են, որ չէ կարելի չանել թէ գիւղացին այժմ խոշոր բայելի կանէ զէպի իրաւունքների աշխարհը:

Ամեն մէկին յայտնի է թէ որքան իրաւագործ է մեր գիւղացին, ինչ կամայականութիւնների է նա ենթարկված և որքան քիչ միջոցներ ունի իր մարդկային իրաւունքները պաշտպանելու համար: Դատաստանական և վարչական այն կարգը, որ այժմ գոյութիւն ունի գիւղերի համար, միայն ցեցիք ու հարստահարչներ է հանում նոյն այդ գիւղական հասարակութեան միջոց: Նկարագրել նրանց բոլոր շահատակութիւնները աւելորդ պէտք է համարել: Ո՞ւր չեն նրանք յայտնի: Գիւղական արիւն-արտասուքով ցողված անարդարութեան, կամայականութեան շահատակու-

թիւններ են դրանք: Վերջ զենի այդ իրաւագործի դրութեան, բարեկարգել առանձին տեսակի մարդ համարվող գիւղականի դրութիւնը, տալով նրան հաստատ, օրինական պաշտպանութեան միջոցներ, — ահա ինչ է սպասվում պետական յայտնի գործիչի ծրագրից:

Ամենագլխաւորը այն զգուշացն է, որ պիտի գայ առաջնորդելու զէպի մարդկային բարձր իրաւական գաղափարները, որ պիտի յոյց տայ նրան թէ գիւղում ապրելը չէ նշանակում մի այլ, ուրիշներին չը նմանվող մարդ լինել:

Գիւղացու համար բացվում է նոր դարագլուխ: Գիւղի խաւար հօրեգօնում սկսում է պսպալ առաւօտեան աստղը:

ԴՐՈՁՆԱԼ ՄԻ ՆՈՐ ՊԻՆՍ

(Հայոց ներկայացուցիչներ Բազում)

«Վատ չէ երբ հին ճշմարտութիւնը մէկ անգամ էլ են երևան հանում» — ահա այդպիսի մտքով են հնուցայ թատրոնից ղեկավարների 10 ին, երբ ներկայացվեց Շիրվանզադէի «Պատառի համար» նոր դրաման: Այդ գրութիւնը, իբրեւ դրամա, (4 գործ.), պէտք է ասած, որ մի քիչ թոյլ է, բայց նա շարժում է հետաքրքրութիւն իր նիւթով և շատ էլ վատ չէ բեմական տեսակէտից: Առհասարակ մեր հայ գրողները, որոնք գործել են և գործում են բեմի համար, միշտ տուել են և տալիս են այնպիսի պիեսներ, որոնց հերոսները և բովանդակութիւնը անպատճառ պտտվում են փողի շուրջը, միշտ նրանց խօսակցութիւնները փողի մասին են և, ի հարկէ, մի կողմից առաջ են գալիս պիեսում անագիւլ և վատ հարուստներ, իսկ իբրեւ դրանց հակապատկեր, միւս կողմից, ագիւլ և լաւ աղքատներ: Բայց միթէ մեր կեանքը ուրիշ նիւթ բացի փողից չէ կարող տալ բեմական գոյլին և միթէ չը կան որեւէ աւելի հետաքրքրական երևոյթներ մեր հասարակական կեանքի մէջ, բացի փողային երևոյթներից, որոնք կարողանային մատակարարել նիւթ բեմական գրութեանը: Ուրեմն չը կան, որովհետեւ, ամեն մի նոր բեմական գրութեան մէջ էլի հանդիսանում է անագիւլ հարուստը, ինչպէս և Շիրվանզադէի նոր պիեսայում. դա ուղղակի մեր գրողների համար մի «fatalité et voilà tout» է:

Ուրեմն այդպիսի պիեսները ոչինչ մի նոր միտք չեն ծնեցնում հանդիսականի մէջ և, հետևաբար, չեն կարող երկարատեւ հետաքրքրութիւն շարժել և մշտական տեղ ունել թատրոնական թէպէտուսի մէջ: Բայց անցնենք դրամայի բովանդակութեանը:

Դրամայի բոլոր 4 գործողութիւնը կատարվում է հարուստ Անդրէաս Էլիսաբեանի տանը: Անդրէասն էլիզաբեանի (Պետրոսն) ունի կին Երանուհի (Փառնաձէ), երկու տղայ — մէկը ուսումը վերջացրած, տեխնիկոզ, Բագրատը (Ստեփանեան), միւսը Սուրէն (Օհանեան) և երկու աղջիկ Բօզայիւ (Նոնիկեան) և Մարգարիտ (Քնարիկ): Էլիզաբեանների մօտ նրանց վաճառականական գրասենակում ծառայում է նաեւ Երանուհու եղբայր Սաղաթէլը (Վրոյր), որը մասնակցում է այդ «պատաւաւոր» ընտանիքի գլխաւորի ոճադպրոցութիւնների մէջ և նրա աջ բազուկն է հանդիսանում: Էլիզաբեանը ունի նաեւ մի որդեգիր Արտաշէս (Արիստեան) Օթարեան ազգանունով, որը Էլիզաբեանի մեղած վաճառական ընկերոջ գումարն է, որին նա իր հաշուով բարձր ուսում է տուել և մի խօսքով միշտ օգնել ի յիշատակ այդ հանգուցեալ ընկերի, որի բոլոր հարստութեանը նրա մահից յետոյ Էլիզաբեանը ամենահասուն կերպով սիրեցել է, որովհետեւ նրանք միասին էին վարում ընկերացի իրանց ընդհանուր վաճառականական գործերը: Սյուպէր ասած Էլիզաբեանը կողոպտել է իր ընկերոջը նրա մահից յետոյ և ձգել նրա ընտանիքը կարօտութեան մէջ և յետոյ իբրեւ «բարեբար» ձեռք է մեկնել օգնութեան, որդեգրելով Արտաշէսին և նրա մօրը ամսական մի քանի ռուբլի տալով: Արտաշէս Օթարեանը ուսումը վերջացրած վերադառնում է հայրենիք և յաճախելով Էլիզաբեանների տունը, սիրահարվում է Մարգարիտի վրա. բայց մի և նոյն ժամանակ նա գրաւոր փայտեր է գտնում իր իր թղթերում, որոնցից երևում է, թէ ինչպէս Էլիզաբեանը կողոպտել է Արտաշէսի հօր հարստութիւնը և ինքը միայն տիրացել նրան: Նա թեթևակի այդ բանը հասկացնում է Էլիզաբեանին և պահանջում, որ նա վերականգնէ իրաւ, Արտաշէսի ընտանեկան պատիւը, որը շնորհիւ Էլիզաբեանի «բարեբարութեան» կողմից վաճ է: Էլիզաբեանը փորձում է կաշտել մի

գումարով Արտաշէսին, որ նա դատ չը սկսէ և այդպիսով չը բացանէ Էլիզաբեանի գող լինելը: Բայց ագիւլ Արտաշէսը չէ համաձայնում և ստիպված է լինում պատեղ այդ բոլոր Մարգարիտին, որը և սարսափած հօր անագիւլութեան վրա պահանջում է իր փեսացուից փաստեր հօր դէմ: Արտաշէսը տալիս է Մարգարիտին գրաւոր փաստերը և ագիւլ խօսք վերցնում, որ օրիորդը ծանօթանալով այդ թղթերի բովանդակութեան հետ, կը վերադարձնէ նորից իրան: Էլիզաբեանը իմանալով աղջկանից, որ գրաւոր փաստեր կան Արտաշէսի ձեռքում և այժմ էլ գտնվում են Մարգարիտի մօտ աշխատում է այդ թղթերը մի կերպ կողոպտել Մարգարիտից, բայց աշողութիւն չը գտնելով, դիմում է գիշերային գողութեան Մարգարիտի սենեակից և վերջապէս հրձվում, որ այդ փաստերը այժմ իր ձեռքին են և էլ ոչ մի վտանգ չէ կարող սպառնալ իրան: Մարգարիտը հօր գողութիւնը իմանալով, աղաչում է վերադարձնել իրան թղթերը, որովհետեւ նա ագիւլ խօսք է տուել Արտաշէսին յետ տալ նրան այդ թղթերը, բայց հայրը չէ կատարում Մարգարիտի պաղտատները և այրում է թղթերը: Մարգարիտը յուսահատված և սարսափած, ոչինչ չէ կարողանում պատասխանել Արտաշէսին, երբ այս վերջինս պահանջում է թղթերը: Մարգարիտը միայն ասում է նրան, որ ինքն է այրել: Արտաշէսը, ինքնից, չէ հաւատում և համոզվելով որ ինքը Էլիզաբեանին է այրել, յարձակվում է նրա վրա և զուցէ որ սպանէր այդ ագիւլին, բայց այդ րօպէին ատրճանակի ձայն է որոտում և անշնչացած Մարգարիտը վայր է ընկնում ինքնասպանութեամբ, ագիւլ տեսելով իր և իր ընտանիքի պատիւը: Ահա և դրամայի բովանդակութիւնը: Ինչպէս է այստեղ դրաման: Անշուշտ նրանում, որ Մարգարիտի հոգեկան խռովութիւնը, այն րօպէից որ նա իմանում է հօր անագիւլութեան մասին, գնալով աստիճանապէս դարձանում է, ընդարձակվում և ելք չը գտնելով հասցնում Մարգարիտին ինքնասպանութեան: Բայց, զրգախառնաբար այն, ինչ որ դրամայի իսկական նիւթն է կազմում, մշակված է շատ թոյլ գծերով, այնպէս որ պիեսան աւելի շուտ նշանում է ուղղակի հարուստ հայ գող վաճառականի անցեալ և ներկայ կեանքի պատճառութեան, քան թէ իսկական դրամայի: Ի հարկէ իր Էլիզաբեանի դրութիւնն էլ է դրամատիկ ներկայացնում, բայց այդ չէ դրաման, այլ այն, որի համար վերելում խօսքերն, այսինքն Մարգարիտի վերաբերման, սակայն այդ կողմը պիեսայի մէջ, ինչպէս և Շիրվանզադէի, թոյլ է և չը մշակված: Շիրվանզադէն արժանացաւ երկարատեւ ծափահարութիւնների և մի քանի անգամ հարկադրված էր դուրս գալ բեմ: Թատրոնը լինէ էր, իսկ դերակատարների խաղը համարեալ ամենքը շատ աջող: Միայն պ. Վրոյրը մի քիչ շարժ էր մտցնում Սաղաթէլի դերում իր ձեռքով, երբեմն չափազանց բաժ:

Արշ. Առաքելեան

ՆԱՄԱԿ ԿԻՍՎՈՎՈՒԿԻՅՑ

Դեկտեմբերի 6 ին

Դեկտեմբերի 3-ին, Կիսովոյովի սակաւաթիւ հայ գաղութը, Սառիկեան քահանայի նախագահությամբ նիստ ունեցաւ ճարտարագետ Էմ. Պօլյանի ընկերակցութեամբ: Կիսովոյովում հայոց եկեղեցի կառուցանելու առիթով:

Այստեղ ապրող հայերի թիւը կարելի է հաշուել 125—130 հոգի, ժողովրդագիտ 25 ընտանիք և մօտ 30 հոգի երիտասարդներ գահալան կողմերից պաղթած: Այն էլ պէտք է ասել, որ գաղութի մէջ աչքի ընկնող հարուստներ չը կան, եթէ չը հաշուեն չեքեքախօս կալուածատէր Թամրեանի ընտանիքը և 5—6 ապահով դրութեան մէջ գտնվող ընտանիքներ: Մնացածները արեւստաւորներ են, ծառայողներ և ժամրավաճառներ: Այսպիսի գաղութի համար, ի հարկէ, վերին աստիճանի դժուար իրադրոյթի ձեռնարկութիւն է Կիսովոյովի նման տեղում եկեղեցու շինութիւնը, մասնաւորապէս որ քաղաքի կենտրոնատեղիքում հողի գինը սարսափելի թանկ է:

Բայց, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ամառ ժամանակ մօտ 5000 հարուստ հայեր են գալիս ապրելու այստեղ և այդ հանգին բազմութիւնը մի անկիւն չունի հարկաւոր զէպերում իր կրօնական պահանջներին լիութիւն տալու, եթէ չը հաշուեն Պետրոսիկի եկեղեցին, որ 35 վերստ հեռավորութեան վրա է գտնվում, տեղին գաղութը

յոյր մասամբ այդ եկեղեցիներ վրա դնելով և մասամբ էլ ընդհանուր հայութեան աջակցութեամբ վրա, քաղութիւն ունեցաւ եկեղեցու կառուցման անհրաժեշտութիւնը միաձայն վճռել և ձեռնարկից յանձնագործի անդամների ընտրութեան: Ընտրվեցան Ստեփան Բեշտաու, Մ. Թամրեան, Ն. Եւանգելեան, Էմ. Պօլյան, Յ. Աչաքեան, Գր. Բաշինջաղեան, Պ. Բաքալեան և Գ. Յոսէփեան: Բացի տեղական մարմնից, ընտրվեցին և երեք պատուաւոր անդամներ, որոնք այստեղ աֆոռանոցներ ունեն, իսկ իրանք այլ քաղաքներում են ապրում: Նոր-Նախնականում՝ Մինաս Բալաբանեան, Արմաւիրում՝ Ալեքսանդր Թորոսեանց և Բազում՝ Գասպար Տէր-Մարգարեան:

Մի և նոյն այդ նիստում վճռվեց գնել այն հողը, որ այս օրերում ծախվում է 12,000 ռ. տեղը մեծ է, 900 քառակուսի սաժեն և քաղէ պարիսպով պատած: Հողը ամենակենտրոնատեղումն է գտնվում: Տեղն ու տեղը հաւաքվեց 1000 ռուբլի հետեւեալ օրը կանխավճար տալու համար և մինչև դեկտեմբերի 28-ը պ.պ. Ս. Բիշտաու, Մ. Թամրեան, Էմ. Պօլյան և Յ. Աչաքեան խոստացան իրանք միջոցները առժամանակ տալ մնացած գումարը, որ հողը ձեռքից չը թողնեն: Հետեւեալ օրը, ամսիս 4-ին, հողը գնվեց 11,000 ռուբլով: Ծարտարապետ Էմ. Պօլյան խոստացաւ ճիւղաբար նկարել եկեղեցու մակարդակը և եկեղեցու շինութեան վրա նկողնութիւնն էլ իր բարոյական պարտքը համարեց:

Մեր կարծիքով, ոչ ոք հարցի վրա լայն հետաքրքրվող պիտի նայինք և պիտի աշխատենք որքան կարելի է շքեղ և պայծառ եկեղեցի կառուցանել ըստ հին հայկական ճարտարապետութեան: Սա մի վայր է, որտեղ ամառ ժամանակ Ռուսաստանի ամեն ծայրերից զարգացած դասակարգն է հաւաքվում, որը ամեն մի ազգի մասին գաղափար է կազմում այդ հասարակութեան հիմնարկութիւններով:

Դիտող

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարմիր խաչի ընկերութեան Կովկասի բաժնի վարչութիւնը մեզ խնդրում է տպագրել, որ իր գումարների վերաբերելով, երկացել է հետեւեալ. 1904 թւի նոյեմբերի 1-ին եղել է 214,072 ռ. 8 կօպէկ. նոյեմբերի ընթացքում մուտք եղել է 3023 ռ. 60 կ., ծախս—1207 ռ. 48 կ. և 1904 թ. դեկտեմբերի 1-ին գումարների ընդհանուր թիւը եղել է 215,878 ռ. 20 կ.: Դրանից 212,000 ռուբլու արժեթղթեր են եղել անուանական արժեթղթով, 2,000 ռ. եղել է ընթացիկ հաշուով, 149 ռ. 21 կ. եղել է խնայողական արկղում և 1728 ռ. 99 կ. առձեռն դրամ է եղել գանձարանում:

Կովկասի կառավարչապետի ժամանակաւոր պաշտօնակատարը նոյեմբեր ամսի 6 ին հնաբաւոր է դատել փոխելու Բագրեւի բնակիչ Ի կարգի վաճառական Համբարձում Սերգէեւիչ Մելիքեանի դէմ արված վարչական միջոցը, որով նրան արգելված էր Կովկասի սահմաններում բնակվելը: Նոյն թւին փոխված է Ալեքսանդրօպօլի բնակիչ Ստեփան Գեորգեան Տէր-Սահակեանի դէմ եղած նոյնանման վրճիւր:

Ռուսաստանի լրագրիներում լուր է երևացել, որ հնադարեաների Նիմֆ-Նովգորոդի եպիսկոպոս Ինովկինսկիին տարել են Հեռաւոր Արեւելի բանակի իբրեւ հասարակ զինուոր: Այդ պատճառով յիշված եպիսկոպոսը հետեւեալ նամակն է ուղարկել «Слово» լրագրին. «Հնադարեաներին յուզող լուրեր են տարածվել, որ իբր թէ ինձ զինուոր են տարել գործող բանակի. այդ առիթով ինձ բազմակի հարցումներ են անում: Թոյլ տուէք, խնդրեմ, յայտնել որ այդ լուրը բոլորովին սուտ է: Ինձովկինսկիս խլիսկոպոս»:

«Вак. №3.» լրագրերը լսել է, որ Կովկասի գաղութական շրջանի հոգաբարձուն արել է մի շատ համակրելի կարգադրութիւն. իբր թէ նա արգելել է Բագրեւի արական միջնակարգ դպրոցները դասատուներին պահել իրանց մօտ աշակերտներ, նոյն իսկ եթէ նրանք օտար քաղաքներից լինեն:

Սամարայի նահանգի Բուդուրուկ գիւղից «Р. В.»-ին գրում են. «Դերեօվկա գիւղից պատերազմ տարված գիւղացի Կանսեւիկ կինը՝ Աննան մնացել է իր փորբահասակ դաւակի հետ. նրանք ունեն 30 պղնձ հաց, մի կով և 2 զենեւատին վարելահող: Այժմ նրանից ու-

դրում են հարկերը և դրա համար հրամայում են ծախել եղած բոլոր ցորենը, կամ սպառնում են հողը խել և կովը ծախել—այսինքն՝ բոլորովին սնանկացնել։ Եւ դա եղակի դեպք է։ Այդպիսի դեպքեր շատ կան—«Ե. Բ.» ին ասում է, որ Պենզայի նահանգական գեմատված ուշը է դարձրել մի շարք այդպիսի երեւոյթները վրա և խնդիր է ներկայացրել, որ պատերազմի գնացած զինուորների ընտանիքներին հարկերի հաւաքումը յետաձգվի՝ մինչև որ պատերազմից վերադառնան նրանց աշխատող անդամները։ Զեմսովովի խնդրին դեռ ևս պատասխան չեն տուել։ Նոյն տեսակ դառն փաստեր բերում է և «Ե. Բ.»-ի աշխատակից պ. Կ. Նոսիլովը։ Եւ պատմում է նոյն տեսակ և աւելի տխուր փաստեր, որոնց վրա հիմնվելով, լրագրի խմբագրութիւնը հետևեալն է ասում. «Մեզ թւում է, որ զինուորների ընտանիքներին նրանք, որոնք զոհվել են իրանց աշխատաւորներից՝ կորցնելով նրանց պատերազմի դաշտում, առանց այլ և ալլովիւն պէտք է ազատվեն հողերը յետ գնելու վճարումներից յաւրտեանս-յաւրտեանից. նոյն տեսակ արտօնութիւն պէտք է տալ և ծանր վերաւորներին, որոնք վերադառնում են հայրենիք՝ ուստիպառ, աշխատելու ընդունակութիւնից զրկված։ Վերջապէս մնացած բոլոր զինուորների ընտանիքներին կարելի է ապաւորել հողը յետ գնելու վճարումներից 5 կամ 10 տարով։ Այդ միջոցը գանձարանի վրա կը նստէր մի քանի միլիոն ռուբլի, ճշմարիտ է—բայց դա պատերազմական ընդհանուր ծախքի հետ համեմատած ոչինչ է»։

«Правда» շարժաթերթը հաղորդում է, որ նոյնները 29 ին Արխանգելսկ քաղաքում ներքին գործերի մինիստրի հրամանով արտոյրք և ոստիկանական հսկողութիւնից ազատվել են Ն. Ի. Իլինսկին և Ա. Բ. Բերկովը—երկուսն էլ Ուֆայի նահանգական գեմատվածի նաւայորներ։ Նրանց քաղաքի էին Արխանգելսկ 4 տարով հանգուցեալ մինիստր Վ. Կ. Պլեկին Ուֆայի նահանգապետի խնդրով։ Իլինսկին կառավարիչ էր ապաւորակական մասի, իսկ Բերկովը գնահատման յանձնաժողովի մէջն էր։

Մօզիրովից գրում են «Речь»-ին. «Այստեղ կայացաւ Մօզիրովի նահանգի աշխատակառնութիւն մասնաւոր խորհրդակցութիւն։ Խորհրդին մասնակցում էին 24 հոգի։ Խորհուրդը որոշեց խնդիր ներկայացնել, որ Մօզիրովի նահանգում մտցնեն 1864 թվի կանոնների համաձայն այնպիսի զեմատված, ինչպիսին կայ Ռուսաստանի ներքին նահանգներում։ Յայտնված կարծիքներից երեւաց, որ իրանց նահանգում մտցված կրնասկա զեմատված ոչ միայն ոչ ոքի չէ բաւականութիւն տուել, այլ քանի գնում աւելի և աւելի հեռացնում է իրանից զեմատված իսկական գործիչներին։ Այս փաստի գեմատված բերօքրատիկական ընտանիքներին իր չինտիկ-գործիչների ճնշող մեծամասնութեամբ չէ կարող զբաւել ազգաբնակչութեան ուշադրութիւնը և համակրանքը։ Այդ պատճառով էլ խորհուրդը վճռեց դիմել և խնդրել, որ ներմուծվի համառուական զեմատված 1864-ի ծրագրով, որովհետև միայն այդ միջոցով կարելի է յուսալ ժողովրդի կուրախական մակերևոյթի բարձրացումը»։

Երեւոյի նահանգապետ տեղական լրագրերում տպագրել է հետեւեալ յայտարարութիւնը. «Թագաւոր Կայսր Բարձրագոյն բարեհաճել է պատերազմական վիճակի մէջ չը յայտարարված զինուորական շրջանների գլխաւորներին իրաւունք տալ զինուորական գատարանի ենթակից, գործադրելով պատերազմական ժամանակի օրէնքները, զօրաշարժի ենթակից լինելով այն զինուորացուներին, որոնք պէտք է մեկնեն Հեռաւոր-Արևելք, — ի՞նչ նրանց գործին այնպիսի անկարգութիւններ ու յանցանք, որոնց համար՝ պատերազմական ժամանակի օրէնքները համաձայն՝ մասին պատիժ և տաժանակիւր աշխատանք է որոշվում. այդպիսի գործերի վերաբերութեամբ գործադրվելու է Ձինուորական-Դատաստանական Կանոնադրութեան 4 դ բաժնի III գլխի բովանդակութիւնը»։

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Ամսի 9-ին առատ ձիւն եկաւ Գանձակի գաւառի ամբողջ տարածութեան վրա. գաւառի թէ լեռնային և թէ տափարակ մասը գտնվում են այժմ ձիւնի շերտի տակ, որը լեռնավայրում անհամեմատ հաստ է։ Զմեռվայ սկզբում եկած այս առատ ձիւնը, հաւանական է, բարեբար հե-

տեանքներ կունենայ մեր գաւառի համար, որը անցեալ ձմեռվայ չորութեան շնորհով այս տարի բաւականին տուեցեց»։

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՆԱԳՐՈՒ ԶՈՐԻՃԸ

Պոլս Արտուրի եսկադրայի ոչնչացման մասնաւորութիւնները «Daily Chronicle» թերթը տպում է, հիմնվելով եսկադրական պաշտօնական զեկուցումների և թղթակցութիւնների վրա, պատմութեան Պօրտ-Արտուրի եսկադրայի ոչնչացման զանազան էպիզոդների մասին։ Եսկադրացիները սկսեցին իրագործել իրանց ծրագրերը մի քանի ամսից ի վեր։ Օգոստոսի 10-ի (ն. տ.) ձաւառամարտից յետոյ ուսաց էսկադրան վերադարձաւ Պօրտ-Արտուր։ «Բեռլինցան» և «Պօրտուս» աւելի շատ էին ֆլաւալ-ծ, քան միւս նաւերը, բայց նաւահանգիստը վերադառնալուց յետոյ, նաւերը չը ֆլաւալեցին ուղիղութիւնից։ Սեպտեմբերի 17-ին, «Բեռլինցան» կապիտան Վիլհելմ Նաւակովից զինուորական խորհրդից, որին մասնակցում էին և զինեալ Ստեպէլը ու Ֆօկը, նաւաւորմի հրամանատար։ Սեպտեմբերի 18 ին նոր հրամանատարը փորձեց նաւաւորմը դուրս հանել նաւահանգիստից, բայց նկատեց, որ ականները պատճառով այդ փորձը շատ վտանգաւոր է և անմիջապէս վերադարձաւ նաւահանգիստը։ Հետեւեալ շաբաթվայ ընթացքում Վիլհելմ խնամքով մաքրեց նաւահանգիստի մուտքը ականներից. սեպտեմբերի 28-ին եսկադրացիներին աշողվեց դնել յարմար դիրքերի վրա ծանր ծովային թուգանքներ։ Կապիտան Կուրօկի ղեկավարութեամբ այդ թուգանքները ամբողջ օրը ուղիղութիւնից ռուսական էսկադրան։ Սեպտեմբերի 29-ին հրաձգութիւնը չը վերսկսեց։ Մովսիս Վիլհելմ կարգադրութիւն արեց էկիպաժներին լցնել քանակները աւազով և դասաւորել նրանց զբաւուրների տախտակամաների վրա և մի և նոյն ժամանակ շարունակել ականները որսալը։ Նոյն օրը երեկոյեան Վիլհելմ այցելեց բոլոր նաւերը։ Նա ժողովեց նաւերի էկիպաժները և յայտնեց, որ անհանրին է փորձել դուրս գալ նաւահանգիստից, որովհետև մուտքը դեռ մաքրված չէ ականներից և այդպիսի պայմաններում դուրս գալ կը նշանակէ հաստատապէս մահ որոնել։ Պէտք էր ուրեմն դեռ մնալ նաւահանգիստում։ Հետեւեալ օրը, սեպտեմբերի 30 ին կապիտան Կուրօկին նորից բացեց կառավարչութեան նաւաւորմի դէմ։ «Պօրտուս» և «Պօրտուս» մի քանի անգամ հարուածվեցին։ Սեպտեմբերի 30-ը որ առաջ ծովագետական նաւ էր և միակը, որ կարող էր կարկառման, տարվեց ծովախորշը, ուր ուռմբերը չէին հասնում։ Վիլհելմ փոխադրեց իր գրօշակը «Պօրտուս» վրա, որ ամենից շատ էր ենթարկվել ուրաւակոծման։ Հոկտեմբերի 2-ին, ցերեկվայ ժամը 3 ին, «Պօրտուս» վրա ընկաւ մի մեծ ուռմբ և խփեց գլխաւոր աշտարակին։ Յամբային զօրքերը մի քանի անգամ յարձակվեցին եսկադրական մարտիկների վրա, որպէս զի ստիպին նրանց դադարեցնել կրակը և եսկադրական մարտիկները, իրօք, հոկտեմբերի 3-ին երեկոյեան դադարեցրին ուղիղութիւնը։ Հոկտեմբերի 4 ին հրաձգութիւնը վերսկսվեց, եսկադրացիները սաստիկ հարուածեցին «Պօրտուս»։ Թուրքը դիպաւ նաև «Պօրտուսային» և «Պօրտուսային»։ Հոկտեմբերի 6 ին երկու նաւերի վրա ընկան 2 մեծ ուռմբեր և նրանք այլ ևս չէին կարող շարժվել։ Առեւտրական նաւերը, որոնք սոյնպէս էին դասաւորված, որպէս զի կարողանան պաշտպանել պատերազմական նաւերը, շրատոյգ եղան։ Զբաւաւորները տարվեցան ներքին նաւահանգիստը, իսկ «Բեռլինցան» էկիպաժը փի իջեցրվեց։ Հոկտեմբերի 11-ին Վիլհելմ դուրս եկաւ 9 հաւա-ականանաւերով և յարձակվեց եսկադրական հաւա-ականանաւերի վրա։ Զաւաւորամարտը վերջացաւ անորոշ և ուռմբերը վերադարձան։ Հոկտեմբերի 13-ից մինչև 22-ը ուղիղութեամբ շարունակվեց։ Վիլհելմ եռանդով պաշտպանում էր իր նաւերը կրակից, մնալով միշտ ամենապատանգաւոր տեղերում։ Եկիպաժը անուանեց նրան Սալամանդրա։ Սակայն ոչ մի քան այլ ևս չէր կարող փրկել ուսական էկիպաժը եսկադրան կապիտանի կրակից, երբ եսկադրացիները զբաւեցին 203 մետրանց բերլուրը։ (См. Вѣд.)

ՄԵՏԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

14 դեկտեմբերի
ՊԵՏԵՐԲՈՐԳ. Պաշտօնական Կառավարչական հաղորդագրութիւն։ Ներկայ տարվայ աշնան Պետերբուրգում տեղի ունէին զանազան նահանգական գեմատվածների մի քանի ձայնաւորների ժողովներ, որոնք մի շարք ցանկութիւններ յայտնեցին, այդ ժողովներին մասնակցողների կարծիքով, կայսրութեան ներքին վարչութեան անհրաժեշտ բեֆօրմներ մասին։ Այդ ցանկութիւնները դարձան մասնաւոր և գանազան, դրա համար կամ ուրիշ առիթներով հրաւիրվող ժողովների ընտրութեան առաւել, նոյնպէս և, օրէնքների պահանջների հակառակ, քննվում էին մի քանի քաղաքային դոմանների և գեմատվածների ժողովների նիստերում այն անձանց ազդեցութեան տակ, որոնք ձգտում են խռովութիւն մտցնել հասարակական և պետական կեանքի մէջ և օգտուել քաղիկ հասարակութեան մէջ ծագած մտքերի թաղմունքից, առաւելապէս երկտասարդութեան դիւրազգաց շրջանում։ Կայսրութեան մի քանի քաղաքներում տեղի ունեցան մի շարք ազդակի դոմարումներ, որոնք յայտնում էին զանազան պահանջներ կառավարութեան ներկայացնելու անհրաժեշտութիւնը և որոնք թղթատրելի չեն կայսրութեան հիմնական օրէնքներով սրբազորված մեր պետական կազմի անասան սկզբունքների հիման վրա և ամբողջ խռովութեամբ սարքվում էին փո-

ցելը այժմ նոյնչափ անհանրին է, ինչպէս երբեք կամ վեց ամիս առաջ։ Ռուսաստանը ոչ մի ուշադրութիւն չէ դարձնում որ և է պարտութեան վրա, որ կրում է ցամաքի կամ ծովի վրա և առաջվայ պէս ոչ մի կապ չէ թողնում իր անյաղթելիութեան մասին։ Այդ պատճառով հաշտութեան մասին մտածել անգամ պէտք չէ, մինչև այն օրը, երբ պատերազմի բեմից դուրս որ և է կարեւոր փոփոխութիւն տեղի կունենայ։ Պարզի լրագրի ներքին շարժումները և Պօրտ-Արտուրի անկմանից յետոյ միկազօն պէտք է դիմէ Կայսր Նիկոլայ II-ին առաջարկելով հաշտութիւն կնքել։ Բայց ես կարող եմ հաւատացնել ձեզ, առաջ բարձր, որ միկազօն երբեք այդ չի անի, թէկուզ չէնց նրա համար, որ Ռուսաստանը այդ ժամանակ կը յայտարարէ, թէ Եսկադրան իրանից հաշտութիւն է խնդրել։ (Ե. Օ.)

—Սակայն նոյն հաշտութեան հարցի առիթով մի բարձրաստիճան անգլիական զիպլոմատ Եսկա ինչ է յայտնել Վիեննայի «N. F. P.» թերթի թղթակցին։ Արդէն մշակված են մասնաւորապէս արձանագրութիւններ հաշտութեան միջնորդութեան հարցին վերաբերեալ բոլոր կէտերի մասին։ Մանրամասն մշակման առարկայ եղել են—Մանչուրիայի ապագայ իրաւական դրութիւնը, մանչուրական երկաթուղու, Դալնիի և Պօրտ-Արտուրի ապագայ վիճակը։ Միջնորդութեան մասին առաջարկութիւնը տեղի կունենայ, հէնց որ կը յայտնվի, որ պատերազմող կողմերը պատրաստ են ընդունել նրան։ Այդ գործում նախաձեռնութիւն ընդունած պետութիւնները լուրջ նշանակութիւն չեն տալիս այն հերքումներին, որոնք անվում են կիսապաշտօնական կողմից։ Այդ հերքումները նպատակ ունեն որոշ ազդեցութիւն գործել հասարակական կարծիքի վրա Ռուսաստանում և Եսկադրայում, բայց դրանցից գործի էութիւն չէ փոխվում։ (Вѣд. Вѣд.)
Հուլի միջնադարի առիթով «Новое Время» լրագրի սեփական թղթակցից հետազոտում է Լոնդօնից. «Հոլլանդ վերջացաւ վարձատրութեան հարցի վերաբերեալ ընտրութիւնը այն ֆնանսների համար, որ ձկնորսական նաւերը կրեցին Հիւսիսային ծովում տեղի ունեցած դէպքի ժամանակ։ Բոլորին ակամայ դարմացում է ֆնանսաւորների արած անհանջները չափազանցութիւնը։ Օրինակ, ռուսական ուռմբի հասցրած թիթի վէրքի համար պահանջում են 5000 ռուբլի։ Վարձատրութիւն են պահանջում և նրանք, որոնք ոչինչ ֆնանս չեն կրել ոչ անձամբ, ոչ էլ գոյքով, միմիայն «Չլային ցնցովի» և երկրի վրա համար վարձատրութիւն են պահանջում ձկնորսական նաւաւորմի վրա ներկայ եղող ձկնորսները և ոչ ձկնորսները, և մինչև անգամ քաղաքացիները, բայց այսպէս թէ այնպէս նաւերի հետ որ և է անհշուտիւն ունեցողները, որոնք հիւանդացի են երկրի վրա։ Այդ երկրի վրա համար ցանկանում են ստանալ 28,000 ռ., բացի բոլոր ուրիշ պահանջներից։

ՄԵՏԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

14 դեկտեմբերի
ՊԵՏԵՐԲՈՐԳ. Պաշտօնական Կառավարչական հաղորդագրութիւն։ Ներկայ տարվայ աշնան Պետերբուրգում տեղի ունէին զանազան նահանգական գեմատվածների մի քանի ձայնաւորների ժողովներ, որոնք մի շարք ցանկութիւններ յայտնեցին, այդ ժողովներին մասնակցողների կարծիքով, կայսրութեան ներքին վարչութեան անհրաժեշտ բեֆօրմներ մասին։ Այդ ցանկութիւնները դարձան մասնաւոր և գանազան, դրա համար կամ ուրիշ առիթներով հրաւիրվող ժողովների ընտրութեան առաւել, նոյնպէս և, օրէնքների պահանջների հակառակ, քննվում էին մի քանի քաղաքային դոմանների և գեմատվածների ժողովների նիստերում այն անձանց ազդեցութեան տակ, որոնք ձգտում են խռովութիւն մտցնել հասարակական և պետական կեանքի մէջ և օգտուել քաղիկ հասարակութեան մէջ ծագած մտքերի թաղմունքից, առաւելապէս երկտասարդութեան դիւրազգաց շրջանում։ Կայսրութեան մի քանի քաղաքներում տեղի ունեցան մի շարք ազդակի դոմարումներ, որոնք յայտնում էին զանազան պահանջներ կառավարութեան ներկայացնելու անհրաժեշտութիւնը և որոնք թղթատրելի չեն կայսրութեան հիմնական օրէնքներով սրբազորված մեր պետական կազմի անասան սկզբունքների հիման վրա և ամբողջ խռովութեամբ սարքվում էին փո-

ղոցային ցոյցեր, որոնց ժամանակ յայտնի դիւադրութիւն էր ցոյց տրվում ոստիկանութեանը և իշխանութիւններին։ Այդպիսի շարժումը վարչութեան գոյութիւն ունեցող կարգի դէմ, խորթ լինելով ուս ժողովրդին, որը հաւատարմի էր գոյութիւն ունեցող պետական կազմի դարեւոր հիմունքներին, աշխատում է տալ վերոյիշեալ յուզմունքներին նրանց ոչ յատուկ ընդհանուր ձգտման նշանակութիւն։ Այդ շարժումով համակված անձինք, Ռուսաստանի վիճակ ընկած ծանր տարին մոռանալով, կուրացած այն բարբերների խառնակ ցնորներով, որ նրանք սպասում են ուսական պետական կեանքի դարեւոր սրբազորված հիմունքները արմատական փոփոխութիւնից, իրանք այդ բանը չը գիտակցելով, գործում են ոչ թէ յօգուտ հայրենիքի, այլ նրա թշնամիներին։ Կառավարութեան օրինական պարտք է—պաշտպանել պետական կարգը և հասարակական հանգստութիւնը ներքին կեանքի կանոնաւոր ընթացքը ընդհատելու որ և է փորձից, այդ պատճառով կարգի և հանգստութեան աւան խախտումն և հակակառավարական ընտրութիւնն ունեցող ամեն համախմուտների պէտք է և կը լինեն դադարեցրված իշխանութիւնների ձեռքում գտնող օրինական բոլոր միջոցներով, իսկ այդ խախտումները մէջ յանցաւոր գտնողները, մասնաւորապէս պետական ծառայութեան մէջ եղողները, օրինական պատասխանատուութեան կենթարկվին։ Զեմսովովի և քաղաքային հաստատութիւնները և ամեն տեսակ հիմնարկութիւններ և ընկերութիւններ պարտաւոր են չը դուրս գալ իրանց իրաւաստութեանը յանձնված առարկաների սահմաններից և չը շօշափել այն հարցերը, որոնց ընտրութեան համար նրանք չունեն օրինական լիազօրութիւն։ Իսկ հասարակական ժողովները նախազանցեալ, որոնք թող կը տան այդ ժողովներում ընկելու դրանց իրաւաստութեանը ոչ-ենթակայ համապետական ընտրութիւնն ունեցող հարցեր՝ ենթարկվում են պատասխանատուութեան գործող օրէնքներին հիման վրա։ Մամուլի օրգանները, ի՞նչ խոհուն կերպով վերաբերվին դէպի ընթացիկ դէպքերը և գիտակցին իրանց վրա ընկած պատասխանատվութիւնը՝ պէտք է իրանց կողմից հարկաւոր եղած խաղաղութիւնը մտցնեն հասարակական կեանքի մէջ, որը վերջին ժամանակը շեղվել էր կանոնաւոր ընթացքից։

ՏՕԿԻՐ, 12 դեկտ. (Բէյտէր)։ Տօկիոյ վերածված է մի ընդարձակ զինուորական բանակի։ Այնտեղ այժմ կրկնվում է այն, ինչ անցեալ զարման էր, երբ տեղի էին ունենում առաջին բանակի զօրաշարժերը և առաւել դէպի Մանչուրիա։ Հարաւոր նորակոչներ գտնվում են մայրաքաղաքում։ Զօրանոցները լցված են։ Ստիպված են զինուորացուների զետեղել մասնաւոր տներում։ Եւանդուն գործունէութիւն է թագաւորում աօնաման բանակաւորում, ուր տեղի են ունենում անընդհատ վարժութիւններ։ Շտապով շարժուն վիճակի են դրւում մարդկանց, ձիերի և բատարէաները, որպէս զի մարշալ Օյեմայի բանակը հասցնեն մինչև 1/2 միլիոնի։ Զմեռը չէ խանգարում տեղափոխութեանը։ Տօկիոյ մինչև Լեհոստան հասնում են 6 օրում։ Դալնից մինչև Եսկադրա երկաթուղին գործում է կանոնաւորապէս։ Եւանդով պարտաւորվում են Զօրաւորայի և Հարաւային կղզիների պաշտպանութեանը, ցանկալով արգելիլ բալտիկական էսկադրային այնտեղ հիւր գնդերը։

ՄՈՒԿԻՆ, 13 դեկտ. (Սեփ. Թղթ.)։ Դերբերում խաղաղութիւն է։ Զօրքերը շատ լաւ են սարքվել։ Մարդիկ և ձիերից մարքայաւորներ ունեն։ Ծառ զգեստները, միւսը և հացը առատ են։

ԱՌԻՆԻՔ։ Դելիանիսին է յանձնված նոր կառնէտ կազմակերպել։

ՏՕԿԻՐ (Բէյտէր)։ Այն լուրը, որ Հօլլանդիան մտադր է բալտիկական էսկադրայի տրամադրութեան տակ դնել Սաբանգ քաղաքը, զրգուռում է եսկադրական ազդին։ Նշանաւոր լրագրիկներից մէկն ասում է, որ եթէ Եսկադրան չէ կարող գտնել արդար վերաբերմունք չէզոք կողմից պետութիւնների կողմից, նա պէտք է ինքնապաշտպանութեան համար միջոցներ ձեռք առնէ։

ԶԻՖՈՒ, (Բէյտէր)։ Լուր է պտուռում, որ դեռ ներալ Նօգին ծանր կերպով վերաւորվել է ձեռքից և ոտքից՝ հրացանի զնգակներով՝ այն ժամանակ, երբ նա ղեկավարելու է եղել Բարձր լեռանը տիրելու նախընթաց գործողութիւնները։ Նօգին այժմ գտնվում է Դալնի մէջ մի հիւանդանոցում։

ԶԻՖՈՒ, 13 դեկտ. (Բէյտէր)։ Պօրտ-Ար-

